

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Քննադրի իրավունքով

ԴԱՆԻՆԼՅԱՆ ՄԱՐՏԻՉ ԴԱՆԻՆԻ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՆԱՐՈՒԿՆԻԱՆԱՆ ԽՄԹԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ 19-ՐԳ ԴԱՐԻ 80-ԱՅԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Մասնագիտությունը - Հայոց պատմություն է.00.01

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական ապրիմանի
հայցման առեմախոսություն

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Աշխատանքը կատարված է Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում

Գիտական ղեկավար - ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Գ.Ներսիսյան

Պաշտոնական քննդիմախոսներ- Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մ.Ս.Ստեփանյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Հ.Ղևոնդյան

Առաջատար կազմակերպություն- Երևանի Ն.Արզումանի անվան Մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 19 հոկտեմբեր 1996 թ. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհող 004 Հայոց պատմության մասնագիտական խորհրդի նիստում /375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24Գ/:

Ատենախոսության հետ կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական կալիստում:

Սեղմագիրը առաքված է ,,-19 հոկտեմբեր 1996 թ.

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու: Վահագն Մ.Ա.Ա.Մելքոնյան

Տեսչարգր ակադեմիկոս
Գրքիկ Մարգարյանի
Մարգարյանի անունով

25.10.96թ.

ԱՏԵՆԱՍԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԳԻԱՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ - , , Հայ ազգային նարոդնիկական խմբակները և կազմակերպությունները 19-րդ դարի 80-ական թվականներին պորբլեմի ուսումնասիրությունը ունի պատմագիտական և քաղաքական կարևոր նշանակություն: Այն բազմաթիվ է հայ-ռուսական հարաբերությունների պատմության հեղափոխական բնույթի առնչությունները, ինչպես նաև անդրադառնում հայ քաղաքական կուսակցությունների մասնավորապես Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան և Հ. Հ. Դաշնակցության կուսակցությունների ձևավորման խնդիրներին: Տոալիտար ուժերի և ԽՍՀՄ-ի քայքայվելուց հետո նախապայմաններ ստեղծվեցին նշված հարցերը ևս ուսումնասիրել գիտական Օբեկտիվությամբ: Թեմայի ուսումնասիրությունը թույլ է տալիս լուսարանելու այնպիսի հարցեր, ինչպիսիք են հայերի մասնակցությունը ողու հեղափոխական նարոդնիկական կազմակերպությունների գործունեությունը, հայ ազգային նարոդնիկական խմբակների և կազմակերպությունների հանդես գալը հայ իրականության մեջ հայ-ռուսական կապերի պատմությունը, վերլուծության ենթարկելու ողու առաջավոր մտքի ազդեցությունը հայ դեմոկրատական հոսանքների վրա:

ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱՆԸ - Ներկայացված ատենախոսությունը իր առջև նպատակ է դնում վերլուծության ենթարկելու հայ երիտասարդության ներգրավումը ողու հեղափոխական նարոդնիկական շարժման մեջ: Այս պորբլեմը խորհրդահայ պատմագրություն համեմատաբար օրչ ուսումնասիրված հարցերից է:

Աշխատել ենք գուցե տալ, թե ինչպես ողուսհայ երիտասարդները, մասնակցելով հեղափոխական նարոդնիկական շարժմանը, գտնվել են ողուսական համայնքային սոցիալիզմի տեսություն խիստ ազդեցության տակ, ձգտել ենք պարզել այն Օբեկտիվ գործոնները, որոնք պայմանավորեցին երիտասարդության հետագա քաղաքական էվոլյուցիան և նոր հոսանքի հայ ազգային նարոդնիկության հանդես գալու հանգամանքները:

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱՆԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ - Ներկայացված աշխատությունը գիտական մենագրություն է: Սզոագործել ենք ոչ միայն արդեն հրապարակված աղբյուրագիտական նյութերը, այլև շրջանառության մեջ ենք դրել քազմաթիվ նորահայտ արխիվային վավերագրեր: Հրապարակվում են նոր փաստեր, ճշգրտվում են շատ տվյալներ, նորոգի են լուսաբանվում մի շարք հարցեր և այլն:

Ներկայացված ատենախոսության մեջ գուցե է տրված հայ երիտասարդությունից աատիճանական ներգրավումը հեղափոխական նարոդնիկական շարժման մեջ, նրանց մասնակցությունը այդ շարժմանը: Սակայն, երբ

1878 թ. Բիւլիւնի վեհաժողովում Հայկական հարգը դարձավ միջազգային դիվանագիտական օրնարկումների առարկա, հայ նարոդնիկները ևս չէին կարող անուշադրութեան մատնել ազգային-ազատագրական շարժման ին-դիկները: Նրանք աշխատեցին նարոդնիկական զաղափարները հարմարեցնել հայ իրականութեանը և քննող պահանջներին:

Թեմայում այն միտքն է արծարծված, որ հայ նարոդնիկների մի մասը, որ գործում էր ռուս նարոդոլոյան կազմակերպութեան ներքինում, չհակվեց դեպի ազգային-ազատագրական շարժման ինդիկները և պրեզնուլյն զաղափարական էվոլյուցիան, որը յուրահատուկ էր ռուս նարոդնիկութեանը: Գործելով ռուսական իրականութեան պայմաններում և գրեթե կապ չունենալով հայրենիքի հետ, նրանք կամ մնալին որպես նարոդնիկներ, կամ էլ ունեցան այլ ճակատագիր:

Թեմայի ԱԼԳՅՈՒՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ եւ ՊԱՏԵՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ - նարոդնիկական շարժման ուսումնասիրութեան համար առաջին հերթին աղբյուր են ծառայում մեծաքանակ արխիվային վավերագրերը, որոնք հիմնականում պահվում են Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի և Ռիկրաիայի պետական արխիվներում: Միաժամանակ շարժման մասնակիցների և պատմաբանների կողմից հրապարակվել ու գիտական շրջանառութեան մեջ են դրվել բազմաթիվ արխիվային նյութեր: Թեմայի ուսումնասիրութեան համար կարևոր են նաև նարոդնիկական շարժման մասնակիցների հուշերը, որոնք թեև գրվել են շատ տարիներ հետո, բայց երբեմն ունեն սուբեկտիվ բնույթ: Առանձնապես արժեքավոր են Ալոտկմանի, Ֆիգներ, Կրավչիկով, Բախի և այլոց հիշողութեան նյութերը, որոնք տեղեկութեան են հաղորդում ոչ միայն ռուս հեղափոխական նարոդնիկների, այլև հայ գործիչների մասին:¹ Հայ նարոդնիկների պետք է նշել Զր. Միքայելյանի, Ս. Զաքարյանի, Ն. Աբելյանի, Տ. Փրոսկովյանի և այլոց հուշերը, որոնք պարունակում են շատ կարևոր տեղեկութեաններ 19-րդ դարի 80-ական թվականների ազգային նարոդնիկական կազմակերպութեան ներքին մասին:²

Նարոդնիկական շարժման պատմության հարցերը առաջին անգամ փոր-

1. Ալեքսանդր Օ. Վ., "Общество "Земля и воля" 70-х годов", П., 1924, Фигнер В. Н., "Воспоминание", М., 1964, Степняк-Кравчинский С., "Подпольная Россия", соч., т. 1, М., 1958, Бах А., "Записки народовольца", М., 1926.

2. Միքայելյան Զր., "Բնկորներ իմ հուշերից", "Հայտնիք", 1924, նո. 10, Զաքարյան Ս., "Մանկութեան հիշողութեան նյութեր", "Հիշողութեան ուսումնական թվականներ", տե՛ս, "Հ. Յ. Դաշնակցութեան վաթսուամյակ", Բոստոն, 1950, Փրոսկովյան Տ., "Հորս տարի վառում", "Հորիզոն", 1916, նո. 93, 105, 117, 121, 138:

ծել են վերլուծութեան ենթարկել այդ շարժման մասնակիցները ոչ միայն իրենց հուշերում, այլև առանձին աշխատութեան ներքինում:³ Նախախորհրդային շրջանում նարոդնիկական շարժման մասին գրել են պրոֆեսորնալ պատմաբաններ Տուր, Բարբիվեն, Բոգոլեչարսկին, Նոնիկովը և ուրիշները:⁴ Նրանք շրջանառութեան մեջ են դրել նաև մեծ քանակութեամբ փաստաթղթեր, որոնց բնութիւնակները չեն պահպանվել: Այդ աշխատութեանները ունեն ոչ միայն պատմագիտական, այլև աղբյուրագիտական կարևոր նշանակութեան:

Վ. Ի. Լենինը նարոդնիկութեանը բնութագրել է որպես "գյուղացիական դեմոկրատիայի զաղափարախոսութեան":⁵ իսկ նարոդնիկների ծրագրային փաստաթղթերը որպես "գյուղացիական սոցիալիզմի ծրագրեր":⁶

Նորհորդային շրջանում հեղափոխական նարոդնիկութեան պատմության հարցերով զբաղվել են Վ. Օ. Անտոնովը, Ա. Ա. Յակուբովը, Ա. Ա. Գալսկի-տիկովը, Ս. Ս. Վոլկը, Ե. Մ. Լենինը, Մ. Դ. Մալիկը, Բ. Ս. Խաչերերը, Պ. Ս. Տիաշինկին, Բ. Պ. Նոգմիրը, Դ. Մ. Լիվշիցը, Լ. Ս. Լիկովը և ուրիշները:⁷ Ասկայն նշված հեղինակներից ոչ բոլորի աշխատութեաններն են, որ գրված են գիտական բարձր մակարդակով:

Անհամեմատ թույլ է ուսումնասիրված հայ ազգային նարոդնիկական կազմակերպութեան գործունեութեանը: Առաջիններից մեկը հայ հեղինակներից, որ լինելով նարոդնիկական շարժման մասնակից, փործել է վերլուծութեան ենթարկել այդ շարժումը, Գ. Դարաջանյան /Արկմեդ/

1. Лавров П. Л., "Народники-пропагандисты 1873-1878 гг.", М., 1925, Фигнер В. Н., "Забытые труды", М., 1964.
2. Тун А., "Освободительное движение в России", П., 1917, Барыев Л., "Освободительное движение в царствование Александра Второго", М., 1908, Богучарский В. Я., "Активное народничество семидесятих годов", М., 1912, Корнилов А. А., "Общественное движение при Александре втором /1855-1881/", М., 1909.
3. Լենին Վ. Ի., "Նարոդնիկութեան տեսական բովանդակութեանը և նրա քննադատութեանը ար. Ստոլպի գրքում", "Նարոդնիկական մասին", "Ինչ են մոդուրի բարեկամները և ինչպես են նրանք պայտարում սոցիալ-դեմոկրատների դեմ", տե՛ս թիվ, հ. 1:
5. Антонов В. О., "Революционное народничество", М., 1965, Галактионов А. А., Искандров П. Р., "Идеологи русского народничества", Л., 1966, Воля С. С., "Народная воля", М., 1964, Левин Ш. М., "Общественное движение в России в 60-70-е годы 19-го века", М., 1958, Маслин М. Д., "Критика буржуазных интерпретаций идеологии революционного народничества", М., 1927, Итенберг Б. С., "Движение революционного народничества", М., 1965, Ткаченко П. С., "Революционная народническая организация "Земля и Воля", М., 1961.

է: ¹ Եւ թէ իր հուշերի և թէ արխիվային փաստաթղթերի վրա հենվելով, անդադար ձեւ է նարոդնիկական շարժման արձագանքներին հայ իրականութեան մեջ: Սակայն բանավեճի մեջ մտնելով իր նախկին գաղափարախոսներին, մասնավորապէս Ռ. Խան-Ազատի հետ, Ղարաջանը ներկայացրել է հաճախ միմյանց հակասող տեսակետներ:

Մյուս հեղինակը, որ վերլուծութեան է ենթարկել ազգային նարոդնիկական կազմակերպութիւններին և ընդհանրապէս 19-րդ դարի երկրորդ կեսի հասարակական հոսանքների պատմութիւնը, Լեոն է: ² Սակայն 20-30-ական թվականներին հրատարակված Լեոնի աշխատութիւններում առկա են միանգամայն անընդունելի տեսակետներ: Բազմապատակ զիտնականը նշված տարիներին գտնվելով Մ. Պակրովսկու տնտեսական պատմագիտական դպրոցի վուլգար սոցիոլոգիական դոգմաների ազդեցության տակ ժխտեց ինչպէս հայ ազգային-ազատագրական, այնպէս էլ նարոդնիկական շարժման դերն ու նշանակութիւնը: Լեոնի այս հայացքները խստորեն օրհնադատութեան ենթարկեց պատմաբան Մ. Վարանդյանը: ³ Անդադարաբար ազգային նարոդնիկական կազմակերպութիւնների գործունեութեանը, նա իր հայտնի աշխատութեան մեջ նշել է այն մեծ դերը, որ ունեցան այդ կազմակերպութիւնները Հ. Յ. Դաշնակցութեան ձևավորման մեջ: ⁴

Ազգային նարոդնիկական խմբակների պատմութեանը տարբեր առիթներով անդադար ձեւ են սփյուռնի մյուս պատմաբանները: Պարբերական մամուլում հոգովածներ հրապարակեցին Ա. Գյուլիսանդանյանը, Ռ. Սևյանը, Ռ. Դարբինյանը, Գ. Ղազարյանը և ուրիշներ: ⁵

1. Ղարաջան Գ. /Արևիկ/,, Անգլիի հիշողութիւնները”, Թիֆլիս, 1918, ,,Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում”, Թիֆլիս, 1927:
2. Լեոն, ,,Անգլիի”, Թիֆլիս, 1925, ,,Թուրքիայի հեղափոխութեան զաղափարաբանութիւնը”, հ. 1-2, Փարիզ, 1934-1936:
3. Վարանդյան Մ., ,,Ռիշագած մարգարեներ”, ,,Հայրենիք”, 1925, նո. 1:
4. Վարանդյան Մ., ,,Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն”, հ. 1, Փարիզ, 1932:
5. Գյուլիսանդանյան Ա., ,,Հեղափոխական խմբումները Թիֆլիս քաղաքի և նահանգի մեջ”, ,,Հայրենիք”, 1940, նո. 9, ,,Գաղափարական և հեղափոխական շարժումները ուսանողութեան շրջանում անգլիական դարձ 80-ական թվականներին”, ,,Հայրենիք”, 1940, նո. 11, Սևյան Ռ., ,,Հ. Յ. Դաշնակցութեան սկզբնական գործիչները”, ,,Հայրենիք”, 1938, նո. 3-4, տես նաև ,,Հ. Յ. Դաշնակցութեան առաջին գործիչներն ու հերոսները”, ,,Հայրենիք”, 1937, նո. 11, Ղազարյան Գ., ,,Ինչպէս ծնունդ առավ Դաշնակցութիւնը”, ,,Հայրենիք”, 1925, նո. 1:

Եթե սփյուռնում անդձագործող հայ պատմաբանները հնարավորութեամբ ունենին ազատ կերպով և Թիֆլիսի զիտնիկ վերլուծութեան ենթարկելու պատմագիտական տարբեր պոքլեմներ, ապա դրութեանը բոլորովին այլ էր Հայաստանում:

Խորհրդահայ պատմաբաններից առաջինը, որ համար ձևավեց տոտալիտար ռեժիմի պայմաններում անդադարաբար նարոդնիկական շարժման և հայ քաղաքական կուսակցութիւնների կազմավորման հարցերին, Մ. Գ. Ներսիսյանն էր: ¹ Իր մենագրութեան մեջ նա մասնավորապէս գույց է տվել այդ երիտասարդութեան ներգրավումը հեղափոխական նարոդնիկական շարժման մեջ, գաղափարական էվոլյուցիան և ակտիվ մասնակցութեանը Անդրկովկասում գործող նարոդնիկական խմբակների աշխատանքներին: Հայտնի է սակայն, որ իր ժամանակի գոհնիկ սոցիոլոգները Մ. Ներսիսյանի աշխատութիւնը որակեցին որպէս բուրժուա-նացիրոսալիստական: ² Իհարկէ, այդ միանգամայն շինծու մեղադրանք էր:

Խորհրդահայ պատմագիտութեանը, նարոդնիկութեան պոքլեմներին կարողազամ լայնորեն անդադարաբար միայն խորը շրջանի ,,ժնհալքի” հետ: Պրոֆեսոր Վ. Բշտունին, Օրինակ, հայ հասարակական հոսանքների պատմութեանը նվիրված իր աշխատութեան մեջ օրհնաբար է նաև նարոդնիկական շարժման հարցերը: ³ Ի դեպ, Բշտունին խոսելով Պետրովսկի Ալեքսեյի հայ ուսանողների խմբակի մասին, այն համարում էր լիբերալ-նարոդնիկական: ⁴ Այս տեսակետը չի հաստատվում արխիվային վավերագրով: Ապրում ենք, որ Ռիշո չէր նաև պրոֆ. Վ. Պարսամյանի այն տեսակետը, թէ 1880-ական թվ. գործող հայտնի ,,Հայրենասերներ” Միութեանը” ունեցել է ոչ թէ ազգային նարոդնիկական, այլ ազգային դեմոկրատական ուղղութիւն: ⁵

Ազգային նարոդնիկական խմբակների գործունեութեան մասին արժեքավոր հոգովածներ է գրել ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը: Նշանավոր պատմաբանը գույց է տվել նարոդնիկական շարժման ազդեցութեանը հայ իրականութեան վրա, նարոդնիկութեան էվոլյուցիան, ազգային գունաւորութեան ձեւերը և այլն: Նա շեշտել է ազգային նարոդնիկական կազ-

1. Ներսիսյան Մ. Գ., ,,Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում”, Եր. 1940:
2. Տես ,,Պատմա-բանասիրական հանդես” /այսուհետ՝ ԳՐՀ/, 1990, նո. 4, էջ 179:
3. Բշտունի Վ., ,,Հայ հասարակական հոսանքների պատմութիւն”, Եր., 1956:
4. Տես Նույն տեղը՝ էջ 265:
5. Պարսամյան Վ., ,,Հայ ազատագրական շարժումների պատմութիւն”, Եր., 1958:

մակերպութիւնները դերը հայ ռադաքական կուսակցութիւնների գաղափարախոսութեան ձևավորման գործում:¹

Հայ նարոդնիկների մասին գրել է նաև Վ. Բարսեղյանը:² Նա բարձր է գնահատել Սերոբ և Պետրոս Պեշեքերովների դեմակրութեամբ գործող և հայերից կազմված խմբակի գործունեությունը, գուլյգ է տվել, որ այն եղել է կապող Օղակ Արմենի և Ռուսաստանի հարապային շրջանների կազմակերպությունների միջև:

Նոր հրահայտ պատմաբաններից Խ. Բարսեղյանը ևս պնդել է հայ նարոդնիկների մասին:³ Այս հարցի վերաբերյալ հանդես են եկել նաև Վ. Ավետիսյանը և Ծ. Օհանջանյանը:⁴

Ժամանակակից պատմաբաններից նարոդնիկության հարցերին անդրադարձել է Ա. Համբարյանը:⁵ Նա գուլյգ է տվել այն Արեւիկի պատմաոները, որոնց հետևանքով հայ նարոդնիկները իրենց գործունեություն մեջ շեշտը դրել են ազգային խնդիրների վրա: Միաժամանակ Ա. Համբարյանը վերլուծություն է անցկացրել ազգային նարոդնիկական կազմակերպությունների գաղափարախոսությունը:

Հեղափոխական նարոդնիկական շարժման արձագանքները հայ իրականության մեջ հարցը ուսումնասիրել է Հ. Ղևոնդյանը իր աշխատության մեջ, որը կարևոր ներդրում էր խնդրին վերաբերվող պատմագրությունների մեջ: Նա գուլյգ է տվել նարոդնիկական գաղափարների տարածման պատմաոները, հայ երիտասարդների ակտիվ մասնակցությունը Ռուսաստանում և Արմենիայում գործող նարոդնիկական կազմակերպությունների աշխատանքներին:⁶

Հայ իրականության մեջ հեղափոխական նարոդնիկության գաղափարների տարածմանը անդրադարձել են նաև սովետական պատմաբանները: Լ. Նալբանդյանը՝ Օրինակ, իր մենագրությունում ոչ օրիշ էլ էր է նվիրել հայերի մասնակցությունը նարոդնիկական շարժմանը և նարոդնիկական խմբակներին:

1. Հովհաննիսյան Ա., ,Արևելահայերի մասնակցությունը Ռուսաստանի և Արդովիկասի հեղափոխական շարժումներին /1860-1870 թթ./", ՊՅՀ, 1963, նո. 1, տես նաև ,80-ական թվականների առաջին կեսի արևելահայ ազգային նարոդնիկական խմբակները", ,Բանբեր Հայաստանի արևել-ների", 1968, նո. 2:

2. Բարսեղյան Վ., ,Նոր նախընտանի հայկական գաղութի պատմություն", մաս 1, եր., 1968:

3. Բարսեղյան Խ., ,Մարտիզմ-լենինիզմի տարածումը Հայաստանում", գ. 1, եր., 1967:

4. Ավետիսյան Վ., ,Հայ հասարակական մտքի մարտ-լենինյան էտապի զարգացման ակիզը", եր., 1976, Օհանջանյան Ծ., ,Արդովիկասի երիտասարդության հեղափոխական շարժումները", եր., 1976:

5. Համբարյան Ա., ,Հայ հասարակական ռադիքական միտքը արևմտահայկական ազատագրության ուղիների մասին", եր., 1990:

6. Ղևոնդյան Հ., ,Հեղափոխական նարոդնիկական շարժումը հայ իրականության մեջ 19-րդ դարի 70-80-ական թվականներին", եր., 1991:

գործունեությունը, բնորոշելով այն կապը, որ կղել է այդ խմբակներին և հայ ռադաքական կուսակցությունների միջև:¹

Սովետական պատմաբաններից Ա. Ջյուլյանը ուսումնասիրություններ է անցկացրել հայ կնոջ մասնակցությունը հեղափոխական շարժմանը՝ որին, անդրադարձել է նաև 19-րդ դարի 70-80-ական թվականներին և բարձր է գնահատել Պ. Աղամյանի և մյուսների մասնակցությունը նարոդնիկական տարբեր կազմակերպությունների աշխատանքներին:²

Առանձին հոդվածով Պիլիպի խմբակներին և ,Հայաեռասարդների Միություն" գործունեությունը է անդրադարձել Հ. Տասնապետյանը:³ Ծեղեղովի աղ խմբակների ազգային բնույթը, նա գուլյգ է տվել նաև նարոդնիկական գաղափարների ազդեցությունը նրանց վրա:

Հայերի մասնակցությունը հեղափոխական նարոդնիկական շարժմանը անդրադարձել են նաև վրացի պատմաբանները: Նրանցից Զ. Ծվելիձեն, ուսումնասիրություններ է անցկացրել հայկական երիտասարդության հեղափոխական գործունեությունը, գուլյգ է անցկացրել անդրադարձել է նաև հայազգի նարոդնիկներին:⁴ Նա վերլուծել է Արմենիայում գործող և ազգային խնդր կազմ ունեցող խմբակների պատմությունը: հարցերը, նշել նրանց կապը Ռուսական նարոդնիկական կազմակերպությունների հետ:

Նոր նախընտանի /Դոնի Ռուսով/ հայկական գաղութի երիտասարդության և ռադիկալ մտավորականության մասնակցությունը հեղափոխական նարոդնիկական շարժմանը խորը վերլուծություն է անցկացրել Ա. Տերեշչենկոն:⁵ Իր դոկտորական առնչություններից նաև հարձնելով ,Հայերի մասնակցությունը հեղափոխական-դեմոկրատական նարոդնիկական շարժմանը Ռուսաստանում 19-րդ դարի 40-50-ական թթ.", Տերեշչենկոն մեծ աշխատանք է տարել պրոբլեմի լուսաբանման գործում, շրջանառության մեջ դնելով նորահայտ փաստաթղթեր:

1. Նալբանդյան Լ., ,Հայ հեղափոխական շարժումը. Հայ ռադաքական կուսակցությունների ձևավորումը տասնինըորդ դարում", Երևանի համալսարան, Բերկի և Լուս-Անջելոս, 1963 /անգլերեն լեզվով/:

2. Ջյուլյան Ա., ,Հայ կնոջ պերը հայ հեղափոխական շարժման մեջ", Արմենիա-Լիւան, 1968:

3. Տասնապետյան Հ., ,Հայ հեղափոխական շարժման ուսումնական թվականներ", ,Դոնշակ", 1986, նո. 1:

4. Шведидзе З. Л., "Солужество русских и грузинских революционных народников в 70-80-х годах 19 века", "Вопросы истории", 1957, № 22.

5. Терещенко А. Г., "Новонахичеванцы в революционном народническом движении", ИЖ, 1975, № 4, см. так же "Армяне в революционном народническом движении на Дону и Северном Кавказе", см. в сб. "Из истории вековой дружбы", Ер., 1983.

Ատենախոսությունը քաղկագած է ներածությունից, երկու գլուխներից, վերջաբանից և մատնագրությունից: Առաջին և երկրորդ գլուխները իրենց հերթին ունեն մի քանի ենթագլուխներ:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Հայերի մասնակցությունը ողու հեղափոխական նարոդիկական շարժմանը 19-րդ դարի 70-80-ական թվականներին», վերլուծություն է ենթարկում հայ երիտասարդության ներգրավումը Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքին և մասնակցությունը տարբեր խմբակների ու կազմակերպությունների աշխատանքներին:

Դեռևս 19-րդ դարի 60-70-ական թվականներին ուժեղանում է հայ երիտասարդության հոսքը դեպի Ռուսաստանի և եվրոպայի կրթական կենտրոնները: Այնտեղ նրանք, սովորելու գնացահո, ակտիվորեն մասնակցում էին հասարակական-քաղաքական շարժումներին: Իսկ այդ շրջանում Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքում իշխող դիրք էին զբավում հեղափոխական նարոդիկները:

Հարկ է նկատել, որ 19-րդ դարի 70-ական թվականներին հայ երիտասարդության մեծ մասը ընդունելով «նարոդիկական» զաղափառությունները, չէր փորձում այն կապել ազգային հարցի հետ: Այս երևույթի պատճառներից մեկն այն էր, որ նշված տարիներին Ռուսական կայսրության նախամասերում ծավալված ազգային-ազատագրական շարժումներն համարվում էին համառուսական հեղափոխության քաղկագողիչ մասը: Սակայն 1870-ական թվականներին ևս առկա էր ազգային նարոդիկական ուղղությունը, որը գերակշիռ բնույթ էր դնում 80-ական թվականներին:

Նարոդիկական առաջին կազմակերպություններից մեկի՝ Նեչաևյան խմբակի գործունեությունը իրենց մասնակցությունն են բերել Ջավադ Իշխանյանը, Ստեփան Մուտաֆյանը, Միքայել Ավետիսյանը, Ավետիսյան Կոնստանտինը և ուրիշները: Առանձնապես ակտիվ դեր է ունեցել Իշխանյանը, որը հիմնել էր մեկ այլ խմբակ, որի մեջ մտել են Աբրահամ Ռահիմյանը, Հակոբ Սարիբեկյանը; Ինգրիս Շատաբը, Համիդ Հաջիբեկովը և ուրիշներ: ¹

Առանձին ենթագլուխով ներկայացված է Ստեփան Ղարաշանի և Եկատերինա Պուժանովայի գործունեությունը, «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» մեջ: Ժանդարմերիայի արխիվային փաստաթղթերում Ս. Ղարաշանը դիտվում էր որպես կազմակերպության զանձապահը, որը «իսկանագրել է պրոպագանդիստների էմիսարի պարտականությունները»:

1. "Государственные преступления в России в 19 веке", под ред. Базилювского Б., Штутгарт, 1903, с. 350.

որ պատասխանում է: ¹ Ե. Պուժանովայի մասին ասված է, որ նա հանդիսանում է «խմբակի ամենաշոտ բնկնող անդամներից մեկը»: Որք պրոպագանդիստական աշխատանքներ էր տարել Իվանո-Վոզնեսենում և Վլադիմիրյան հանձնգում: ² «50-ի պրոպագանդիստական հաշիվով» դատաւանը Ս. Ղարաշանին դատաւանագր էր հանձնարում: Երկու տարի ժամկետով, որը պետք է կրեր իր կուտակում: Ե. Պուժանովան դատաւանագր վերջապահ քանտարկություն: ³

Նարոդիկական տարբեր խմբակների և կազմակերպությունների աշխատանքներին մասնակցել են նաև կոնստանտին մամիկոնյանը, Գրիգորի Աբազովը, Ալեքսանդր և Պավել Արզումանյանները, Հովհաննես Մանուշարյանը, Սմբատ Խաչատուրովը, Միքայել Լազարևը, Ալեքսանդր Մադաթովը և ուրիշներ: Սյուպես. Կ. Մամիկոնյանը ակտիվորեն մասնակցել է «Ջեմլյաի վոլյա» կազմակերպության համառուս Օդեսի հրատարակմանը: ⁴ Ջեմլյանյանի ժամանակ նա մոտ հայտնաբերվում է «մի օտար գրքեր և ծեղագրեր հանդգործ բովանդակություններ, իմիջիայն ու նաև «Ջեմլյաի վոլյա» Որինակները»: ⁵

Մոսկվայի ուսանողության դեկադա դեմոստրիկ էր Գր. Աբազովը: Ոստիկանությունը խուզարկություն ժամանակ նրա և իվանովի բնակարանում հայտնաբերում է Լավոսի «Պատմական նամակներ» և մի շարք այլ «հանգագործ բովանդակություններ» գրքեր: ⁶ 1885 թ. Նոյեմբերին Աբազովը ձերբակալվում է: Սակայն հաշվի առնելով նրա սոցիալական փիճակը, Աբազովին ազատում են քանոնից, ենթարկելով խիստ հսկողություն: Շատ չանցած, 1886 թ. մարտին, Աբազովը մահանում է հիվանդանոցում: ⁷ Աբազովի մահը առիթ է տալիս ուսանողական հուզումների: Այդ հուզումների մեջ, ըստ ոստիկանության տվյալների, հայազգի ուսանողներից ակտիվ դեր են ունեցել Սեդիկ Մարգար, Աստիֆանով Խանուկեր, Պա-

1. Российский Государственный Исторический Архив /РГИА/, ф. 144, 1874г., д. 144, ч. 127, т. 2.
2. Государственный Архив Российской Федерации /ГАРФ/, ф. 102, 3-дво, оп. 1886, д. 885, л. 1.
3. Государственный Исторический Архив С.-Петербурга /ГИА С.-Петербурга/, ф. 14, оп. 1, д. 10695, л. 1.
4. Նոյեմբյան Կ. Գ., «Նարոդիկական խմբակներն Սանկտպետում», Եր., 1940, էջ 18-19:
5. ГАРФ, ф. 102, 3-дво, оп. 1886, д. 309, л. 1.
6. Государственный Исторический Архив г. Москвы /ГИА г. Москвы/, ф. 151, оп. 40, д. 305, л. 20.
7. "Деятели Революционного Движения в России. Био-библиографический словарь от предшественников декабристов до подвизания паризма", /ДРД/, т. 5, М. 1933, стр. 1898.

վիլ Արդուլյանը, իսաառուր Հակոբջանյանը, Տիգրան Մատոյանցը, Հակոբ Քոչարյանը և Նախալտ Ստեփանովը:¹

Նաբոդնիկական շարժման աչքի ընկնող դեմոկրից էր Հովհաննես Մանուշաշյանը, որի գործունեությունը ծավալվում է 80-ական թվականներին: 1882 թ. նրան հեռագրում են Պետերբուրգի համալսարանից ուսանողական հուզումներին ակտիվորեն մասնակցելու համար:² Պետերբուրգի համալսարանից փախուկություն հետո Մանուշաշյանը տեղափոխվում է Խաբկով, որտեղ աշխատում էր „200-ի պերեդել“ կազմակերպության գաղտնի տպարանում:³ Սակայն այստեղ նա խուզարկություն է ենթարկվում և ձերբակալվում իր մոտ հայտնաբերված զրականություն և պրոկամացիաների պատճառով: Մանուշաշյանին հաջողվում է երկու անգամ փախչել բանտից, սակայն երկու անգամ էլ ոստիկանությունը կարողանում է հայտնաբերել նրան: Այդ կռկռակի փախուստի, ինչպես նաև ձերբակալություն ժամանակ ոստիկանությունը գինված դիմադրություն գույց տալու համար Մանուշաշյանը 1885 թ. դեկտեմբերին դատապարտվում է մահապատժի, որը սակայն փոխարինվում է տասը տարվա տաժանակությունով:⁴

19-րդ դարի 80-ական թվականների սկզբներին „Նաբոդնիկյան վոյսյի“ ականավոր դեմոկրից էր Պյոտր Թելլալովը: Դեռևս 1874 թ. աշնանը վտարում են Պետերբուրգի Լեոնային ինստիտուտից ուսանողական հուզումներին ակտիվ մասնակցելու համար: 1876 թ. Թելլալովը մեկնում է Խաբկով, որտեղ նրա ջանքերով վերականգնվում է տեղի գրեթե գրված Նաբոդնիկյան խմբակը: Բայց ոստիկանությունը կարողանում է հայտնաբերել խմբակը և ձերբակալել անդամների մեծ մասին, իսկ Թելլալովը խուսափում է ձերբակալությունից և մեկնում Մոսկվա:⁵ 1881 թ. Թելլալովը անգամ Պետերբուրգ, որտեղ և ծավալեց ինչպես անդամները:⁶ 1881 թ. սեպտեմբերին ոստիկանությունը կարողացավ ձերբակալել նրան: „17-ի պրոգեսով“ հրավիրված դատարանը, նաև առնելով, որ Թելլալովը հանդիսանում է գաղապանության հետ կապված ամենից ակտիվ գործիչներից, նրան դատապարտում է մահապատժի: Հետագայում այն փոխարինվեց անժամկետ քսոսով, որն ըստ էության բանտարկություն էր Պետրոպոլիսյան ամրոցում: Այստեղ էլ նա իր մահկանացուն կնքեց 1889 թ.:⁷

1. ГАРФ., ф. 102, 3-дво, оп. 1885, д. 235, лл. 2, 3.
2. РИА., ф. 733, оп. 149, д. 661, л. 1.
3. Հովհաննիսյան Ա. Գ., „Արևելահայերի մասնակցությունը Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին /1860-1870-ական թվականներ/,“ ՊՐՀ, 1963, տ. 1, էջ 26:
4. ГАРФ., ф. 102, 5-дво, оп. 127, д. 5279, л. 24.
5. Яковенко Е. И., "Петр Абрамович Теллялов", М., 1930, с. 5.
6. Անդրյան Հ. Հ., „Հեղափոխական Նաբոդնիկական շարժումը հայ իրականությունում մեջ 19-րդ դարի 70-80-ական թվականներին“, Եր., 1991, էջ 52:
7. Տես նույն տեղը՝ էջ 53:

Հայ և ընդհանրապես եվրոպացի ուսանողները ոչ միայն ակտիվորեն մասնակցում էին Նաբոդնիկական տարբեր կազմակերպությունների գործունեությանը, այլև հաճախ իրենք էին հիմնում այնպիսի խմբակներ, որոնք մեծամասամբ բաղկացած էին իրենց հայրենակիցներից: Այդպիսի մի խմբակ գործում էր Ցյուրիխում, որը „Յամո“ անունն էր կրում:¹

Համանման մի խմբակ գործում էր Պետերբուրգում, որը ժամդարմերիայի հաշվետվություններում, „Հաղակամ“ էր կոչվում: Ա. Հովհաննիսյանը այն նույնացնում է „Հովհաննիսյան“ կոչված խմբակի հետ, որը 1873 թ. հիմնել էր Իգնատի Լուկասիկին: Խմբակի հայազգի անդամներից էին Արշակ, Օլգա և վաղուտ Սաֆարյանները, Մանվան Արմիրշևը, Մանուշ Նվանդունյանը, Գևորգ Խուրադովը, Օլգա Ջանտովան և Գալին Ալվազյանը:²

Առանձին ենթաշխումք վերականգնության է ենթարկված նոր հափիջեանի /Դոնի Ռոստով/ հայկական համայնքի առաջադրված մոսկովականություն և երիտասարդություն մասնակցությունը հեղափոխական Նաբոդնիկական շարժմանը: Նաբոդնիկական շարժումը Խոստովում և նոր հափիջեանում լայն Ռաֆ է ստանում անդյալ դարի 70-ական թվականներից: Այս շրջանում է, որ իրենց գործունեությունը սկսեցին Սերգեյ և Պյոտր Պեչերեբովները, Հանուր Շապովալովը, Մակար Պոպովը, Բաժայիլ Չերնիշևը, Մելգոն Նալալյանը և ուրիշները: Ինչպես վկայում է Պ. Պեչերեբովը, Խոստովը կենտրոնական կայան էր բոլոր նրանց համար, ովքեր պատրաստվում էին աշխատել Դոնում և Հյուսիսային Կովկասում: Ի Գեդ այստեղ նրանք անհրաժեշտ գիտելիքներ էին ստանում ժողովրդի մեջ աշխատելու համար:³

70-ական թվականներին Խոստովում և նոր հափիջեանում լայն տարածում էին ստացել ինտելեկտուալ խմբակները: Նշանավոր աշխատանքներ էին լուսանում Ս. և Պ. Պեչերեբովները, Ալ. Լիսյանովը և Ա. Նեչուրովովը: Վերջին երկուսին Պետերբուրգից Ռոստով էր հրավիրել Ս. Պեչերեբովը: 1882 թ. Ռոստովում հիմնադրվեց Նաբոդնիկյան մի կազմակերպություն, որն իր ենթահմեկներն ուներ տարբեր շրջաններում: Սակայն ոստիկանությունը հայտնաբերեց կազմակերպությունը և ձերբակալեց նրա անդամների մեծ մասին:⁴ Սակայն այդ ձերբակալություններից հետո էլ չի թուլանում Նաբոդնիկական շարժումը Խոստովում: Նշված տարիներին Ռոս-

1. Հովհաննիսյան Ա. Գ., տես նույն տեղը՝ էջ 25-26:
2. Տես նույն տեղը:
3. Пешекеров П. К., "Пропавшая народо-вольная в Ростове-на-Дону в 1882-1884 гг.", см. в кн. "Народовольцы после 1-го марта", М., 1928, с. 117.
4. ГАРФ., ф. 102, 3-дво, оп. 1885, д. 1123, л. 27.

Մյուս նարողիֆիկական կազմակերպությունը, որ հիմնվեց 1881 թ. աշ-
նակը Պիֆլիսում, «Նարողնայա վոլյայի» գործադիր կոմիտեի անդամ Ան-
նա Կորբայի նախաձեռնությամբ, ուներ զինվորական բնույթ: Հայերից
նրա մեջ մտնում էին Ն. Ալիսանյանը և Գ. Տեր-Գրիգորյանը:³ Այս կազ-
մակերպությունը ևս չկարողացավ նրկար գոյատևել: Ոստիկանությունը ձեռ-
քառվում է կազմակերպության անդամների մեծ մասին: Անդամակազմյու-

1. Терещенко А. Г., "Новонахичеванцы в революционном народническом движении", ИЖ, 1875, № 4 /71/, с. 92-95, տես նաև Ղևոնդյան Հ. Հ., Հնդախոսական նպաստը Իրանում?, էջ 71:
2. Ներսիսյան Բ. Գ., տես նույն տեղը էջ 30:
3. Տես նույն տեղը, էջ 46:

Հետազոտել է նվաճել, որ Նովկա արտոգրված նարդոպոլից Ալեքսանդր Մեմյոնովը 1882 թ. «ազգայնական է պատրաստում, և ովքեր նրա օգնությամբ զուգորդվում են»⁵ ուղղված կոչ-խոչով, որում վերլուծության է հանադրվում Նովկայի նարդոպոլիսի միջև առաջացած տարածայնական յուրահանգիստը:⁶ Մեմյոնովը նշում է, որ Նովկայի նարդոպոլիսի յուրահանգիստը, որ մինչ այդ ուներ հիմնադրված, այժմ ստանում է ամրապնդված վերաբերմունք զուգորդելիս սոցիալիստական հեղափոխության համար մոլոր պայտառն, նախապատվություններ տալով ազգային խնդիրներին: Մեմյոնովը չէր գիտակցում, որ այդ երևույթը պայմանավորված էր Օբկոնի մոտ ժողովրդական նարդոպոլիսի չլինելով և կատարյալ ուշադրություն չդարձնել ազգային խնդրին:

1.ДРД., т. 3, вып. 2, М., 1934, стр. 518.

2. Ղառաջյան Գ. /Արևմտիկ/, ,Անգլալի հիշողությունները'', Թիֆլիս,
1918, էջ 9, տես նաև՝ Ջավադյան Ս., ,հիշողություններ ու մտածանա-
կան օրվաները'', տես ,Հ. Յ. Դաշնադուլյան՝ վաթսուամյակ'',
Բաղդադ, 1950, էջ 20:

3. Գյուլիանդանյան Ա., , Հնդկությունում ամուսնանալու Թափու քաղաքի
և խալիվի միջև, , Նախնիք, , 1940, տ. 3, էջ 31:

4. "Иван Овладески в Т.в.мисе", "Висок", 1:24, К 25, с. 96.
5. Зорисавијава П. 9., ива Овладески 12 35:

յին հարգելին: Այդ Օբեկովի գործունեւորի հետևանքով էլ 1882 թ. պառակտվեց Դիմիտրի Կենտրոնական դեկադար կազմակերպությունը: Կոպկասցի նաորդներին մեծ մասը սկսեց գործել ըստ ազգային համակարգչ-ներին: Հայ իրականության մեջ եւս ձևավորվեցին ազգային նաորդները:

Առեւտրապետության երկրորդ գլխում վերլուծության է ենթարկված հայ ազգային նաորդների կամեակների գործունեությունը, որոնք կազմակերպվեցին 19-րդ դարի 80-ական թվականներին: Դրանց հանդես գալը նշանակում էր նոր էտապ հայ ազատագրական շարժումների պատմության մեջ, մի էտապ, երբ գուցակցվում էին մի կողմից ուսուցիչական սոցիալիզմի ուսման տարբերակի /համայնքային սոցիալիզմի գաղափարներ/ և մյուս կողմից ազգային-ազատագրական շարժման խնդիրները:

Ազգային նաորդների կամեակների հայտ գալուն խոշոր չափով նպաստեցին մի շարք պատմական գործունեւոր: Դրանց շարքում նշենք այն հանգամանքը, որ «արևմտահայերի հարցը դառնալ միջազգային դիվանագիտական թնադրությունների առակա: 1877-1878 թթ. ուսմ-ժուրքական պատերազմը և թուրքի կոնգրեսը իսկույն վրա բերեցին հայ հասարակական-քաղաքական բոլոր հոսանքների ուշադրությունը: Հայկական հարցի և Արևմտահայաստանի պատմական ճակատագրի նկատմամբ անտարբեր չմնացին նաև հայ նաորդները, որոնց համար մեծ նշանակություն ստացան ազգային խնդիրները:

Նոր իրադրություն ստեղծմանը խոշոր չափով նպաստեցին նաև հայ ազգային-ազատագրական շարժումների առկայությունը և Մ. Նալբանդյանի, Բաքի, Բ. Պատկանյանի և այլոց ստեղծագործությունները, որոնցում հայ երիտասարդությանը կոչ էր արվում ոտքի ելնել հանուն հայրենիքի ազատագրության: Հայ երիտասարդական բանաստեղծությունները և ազատասիրական ուսման լայն արձագանք ստացան երիտասարդության մեջ:

Հայ իրականության մեջ ազգային նաորդների կամեակների հանդես գալուն որոշ չափով նպաստեց Ալեքսանդր Յ-ի հանդայ քաղաքականությունը, որ նա վարեց 1880-ական թվականներին: Ի պատմական գաղափարական հաղանքների հայ երիտասարդությունը իր ուշադրությունը կենտրոնացրեց ազգային-ազատագրական շարժումների վրա:

Նշված բեկումը հայ նաորդների մեջ որոշակիորեն արտահայտվեց 1879 թ. Անդրկովկասում գործող մի կամեակի Օրինակով: Բեիշե Լուսին-Մելիքովը իր հուշերում վկայում է, որ սկզբնական շրջանում այս կամեակը գտնվում էր նաորդների կամեակների ուժեղ ազդեցության տակ, իսկ 1880 թ. արդեն նա առանձնազալ նաորդների կազմակերպություններից և իր գործունեությունը կենտրոնացրեց ազգային խնդիրների վրա:¹

1. Ներսիսյան Մ. Գ., տես նույն տեղը էջ 41-42:

Ուսենալով ազգային կամեակ, այս նոր կամեակները և կազմակերպությունները, չհրաժարվելով համայնքային սոցիալիզմի դրույթներից, փորձում էին դրանք հարմարեցնել ազգային-ազատագրական շարժման պահանջներին: Ընդ որում սոցիալ-տնտեսական հարցերի վերլուծության մեջ հայ ազգային նաորդները հենվում էին հեղափոխական նաորդների վրա և միջամանակ չէին խոչընդոտում սոցիալիզմի նրանց տակտիկայից և մեթոդներից:

1882 թ. Թիֆլիսում ազգային նաորդների կամեակի հայտնի դեմքերից էին Գրիգոր Տեր-Գրիգորյանը, Աբրահամ Դասակյանը, Փամարա Աղամյանը, Սիմոն Զավարյանը, Քրիստոփոր Միքայելյանը, Սիմոն և Սրապիոն Տեր-Գրիգորյան եղբայրները, Գրիգոր Աղաբաբյանը և ուրիշներ:

Այս կամեակը փաստորեն կենտրոնական կազմակերպություն էր Թիֆլիսում գործող կամեակների համար և տանում էր մեծ ծավալի աշխատանքներ: Նրա ջանքերով էր, որ Արևմտյան Հայաստանը ուսումնասիրելու նպատակով այնտեղ մեկնեցին Ալեքսանդր Պետրոսյանը /Սանդա/, Տիգրան Փիրումյանը, Հայկ Մելիք-Դադյանը, Զաքար Փալարյանը:

Առանձին ենթադրելով վերլուծության է ենթարկված «Հայրենասերների Միություն», կազմակերպության գործունեությունը: Ազգակերպությունը հիմնադրվել էր 1882 թ. գարնանը Մոսկվայում: Այգրեսկան շրջանում նրա մեջ մտնում էին Ն.Արելյանը, Մ.Արտիսյանը, Դ.Ներսիսյանը, Մ.Զալյանը, Մ.Վերելյանը և Ն.Տեր-Խաչատրյանը:² Ազգակերպությունը իր գործունեության նպատակը համարում էր «բալկանյան ազգերի օրինակով հիմնել մի գաղափար ընկերություն մեր առաջնահայ ազգայինների մասին հոգալու համար հեղափոխական միջոցներով», և այն կոչել «Հայրենասերների Միություն»,³

«Միությունը», կարողանում է ձեռք բերել հերոսազա մեքենա և նրանով հրատարակել «Հրավեր հայ երիտասարդությանը», առաջին թուրքիկը: Չնայած ժողովրդային հաջողվում է բռնազավել թուրքիկի 30 օրինակներ, այնուհանդերձ կազմակերպությունը կարողանում է այն տարածել Մոսկվայի ուսանողության մեջ, իսկ Ն.Արելյանը 1882 թ. աշնանը թուրքիկի օրինակները բերում է Մոսկվա:⁴ Թիֆլիսում նա կարողանում է կապել տեղի կենտրոնական կազմակերպության անդամների հետ և սնցկացնել համարներ որոնցում ներկայացվում է «Միության», ծրագիրը:⁵

1 Փիրումյան Տ., «Հորս տարի վախում», «Հորիզոն», 1916, տ. 105.
2 Զալյան Մ., «Հայրենասերների Միությունը», «ՎԵՄ», 1933, տ. 1, էջ 113-114:
3 Տես նույն տեղը:
4 ГИА г. Москвы, ф. 131, оп. 38, д. 257, л. 2.
5 Абелян Н., «Об одном малоизвестном моменте армянского общественого движения», Ե. Հայրենիքի տեղան գրականության և արվեստի թանգարան, Ն.Արելյանի արխիվ, գ. 3, Թ. 4:

„Հայրենասերների Միության“, գործունեության առավել քննադատական շրջանը համարվում է 1883-1884 թթ., երբ թիֆլիսի կազմակերպության անդամների մի մասը տեղափոխվեց Մոսկվա և „Միությունը“, ձեռնամուխ եղավ „Ազատության Ավետարանի“, հրատարակմանը։ Պարբերականի էջերում ծավալվեց զաղափարական լայն պրոպագանդա։

„Ավետարանի“, առաջին համարի առաջնորդող հոդվածում արդեն ընդգծվեց այն, որ „Միությունը“, իր գործունեության ասպարեզը համարում է Օսմանյան թուրքիայի տիրապետության տակ զանվող Արևմտյան Հայաստանը։¹

„Ավետարանում“, միաժամանակ զգացվում է համայնքային սոցիալիզմի ազդեցությունը։ Առաջ խաչելով Արևմտահայաստանի ազատագրության հարցը, թերթը գրում էր, որ „հայ ժողովրդի ազատության հիմնաքարն է նրա տնտեսական անկախությունը... Եթե Հայաստանի աշխատող, արդյունաբերող ուժերը՝ երկրագործը, արհեստավոր մշակը տնտեսապես հարստանալիք ունեն, „Հայրենասերների Միության“, աչքում ոչ մի քաղաքական ազատություն միտք և նշանակություն չունի, ու...“²

„Միության“, համար առաջնահերթ նշանակություն ստացան ազգային-ազատագրական շարժման հարցերը։ Չլրա արտահայտություններ եղան կազմակերպության հրատարակած թուրքիկ և „Ավետարանի“, երրորդ համարը, որոնք լույս տեսան 1883 թ.։ Առաջնորդող հոդվածում վերլուծության ենթարկելով Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր դրությունը, „Ավետարանը“, դրա համար մեղադրում է ոչ միայն թուրքիայի կառավարությանը, այլև մեծ պետություններին Հայկական հարցի նկատմամբ ցուցաբերած անտարբերության համար։ Հիասթափված եվրոպական դիվանագիտական խաղերից, թերթը կոչ էր անում հույների նման արյան գնով ձեռք բերել իրենց ազատությունը, „շխալել իրենց անձը և զանձը ազատության համար,“։

„Ավետարանի“, չորրորդ համարը լույս տեսավ 1884 թ.։ Նրանում քննարկվում էին կազմակերպչական տախտիկական և այլ ընտելի հարցեր։ Առանձնակի ուշադրություն է գրավում „Սարսափահար միջոցներ“, հոդվածը, որում շեշտված ձևով զգացվում է նախնականության ժառանգած տնտրիստական ուղղության ազդեցությունը։ Նշելով, որ Արևմտյան Հայաստանում...

1 Վարդանյան Մ., „Հ. Թ. Գալստիսկույան պատմություն“, Եր. 1992, էջ 438
2 Տես նույն տեղը։
3 Գյուլխանյան Ս., „Զաղափարական և հեղափոխական շարժումները ուսանողության շրջանում անցյալ դարի 80-ական թթ.“, „Հայրենիք“, 1940, № 11, էջ 66/։

այստանում ազատվում են հեղափոխական անցքեր, թերթը առաջարկում էր ստեղծել զինված խմբեր, որոնց նպատակներից մեկը պետք է լինի տնտրիստական ակտերի իրագործումը։¹

„Հայրենասերների Միության“, թիֆլիսյան մասնաճյուղի անդամների ջանքերով հայկական ծխական դպրոցների փակման կառավարությանը լույս տեսնեց մի թուրքիկ, որը համաժամարար տարգրվեց „Նարոդնայա վոլյա-յի“, 1885 թ. նո. 11-12-ում։² Թուրքիկում խստորեն քննադատվում է կառավարության քաղաքականությունը և կոչ արվում մահափոխ կադրակազմի փոխարինման շինողների։ Այսպես ասվում էր, որ „այսուհետև մեր միակ հույսը ինքներս պետք է լինենք,“։³ Դրանից շատ չանցած, „Հայրենասերների Միության“, Արևմտյան և թիֆլիսյան մասնաճյուղերը ինքնավար խմբերի ենթարկվեցին։

Երկրորդ լիստում, առանձին ենթալիստով, ներկայացված է ազգային նարոդնիկական մյուս կազմակերպությունների և խմբակների գործունեությունը։ 80-ական թվականներին թիֆլիսում գործող այդպիսի մի խմբակի մասին գրում է Նարաջյանը իր հուշերում։

Պետք է ենթադրել, որ վերը նշված „Հայրենասերների Միության“, անդամների մի մասը ընդգրկվել են այս խմբակի մեջ։ Խմբակի անդամներն էին Բ. Միքայելյանը, Ա. Պարոտյանը, Խ. Մալումյանը, Գ. Միրզոյանը, Գ. Նարաջյանը և Գ. Մելիքյանը։⁴

Ազգային նարոդնիկական խմբակների ձևավորման պրոցեսը ընթանում էր ոչ միայն Թիֆլիսում, այլև Ռուսաստանի և Եվրոպայի կրթական կենտրոններում ուսանող հայ երիտասարդության շրջանում։ Առկային հայ ուսանողության մի մասը այնուամենայնիվ չէր հրաժարվում նարոդնիկական զաղափարախոսությունից։ Խոսելով այն մասին Բ. Միքայելյանը իր հուշերում նշում է, որ հայ ուսանողությունը շարունակել էր երկու մասի՝ ալաբա կոչված „կոմունալիստներ“, որոնք ավելի կապված էին հեղափոխական նարոդնիկության հետ, և „շովինիստներ“, որոնց մոտ ուժեղ էր հակումը դեպի ազգային հարցերը։⁵ Ազգամեղաբանական տեսակետից այդ

1 „Ազատության Ավետարան“, 1884, փետրվար, № 4։
2 "Народная Воля", 1885, № II-12.
3 Հովհաննիսյան Ա. Գ., „80-ական թվականների առաջին կեսի արևելահայ ազգային նարոդնիկական խմբակներ“, /, Բանբեր Հայաստանի որսիկներին, 1968, № 2, էջ 129/։
4 Նարաջյան Գ. /Արևիկոն/, „Հայ ուսանողի հեղափոխական խմբակ Անդրկովկասում, Թիֆլիս, 1927, էջ 50։
5 Միքայելյան Բ., „Բանբեր իմ հուշերից“, „Հայրենիք“, 1924, № 10, էջ 59-60։

երկու ուղղութիւնները որպէս առանձին միավորներ չէին ներկայանում և շատ համախ հանդես էին զաւիս միասին:

Պետերբուրգի հայ ուսանողութիւնը նույնպէս ակտիվորեն մասն-
ցում էր տարբեր խմբակների գործունեութեանը: Պետերբուրգում գործող
հայկական խմբակներից մեկի մասին է պատմում ժամադրմերիայի արխիվային
փաստաթղթերից մեկը, որում նշվում է, որ խմբակի հիմնադիր ժողովը
տեղի է ունեցել 1884 թ. Հայկ Ալթունյանցի քնակարանում:¹ Համառոտ
է, որ այս խմբակը գտնվել է նարողնիկութեան ազդեցութեան տակ, սակայն
նրա ազգային կազմը հուշում է այն մասին, որ խմբակի անդամները գրադ-
վել են նաև ազգային հարցերով:

Պետերբուրգում գործող մյուս խմբակը, որ միավորում էր ազգային
հարցերով զբաղվող հայ ուսանողների, հիմնադրվել էր 1886 թ.: Նրա
աչքի ինկնող անդամներից էին Առաքել Ղուկասյանը, Հրմհանես Մաթևոսով
Տեր-Հովհաննիսյանց Քաջազունին, Գարրիել Ռոտինյանցը, Պետրոս Զաքար-
յանցը, Արշակ Թաթոսյանցը:² Խմբակի անդամները կազմած էին Մոսկվայում
գործող երկու հայկական խմբակների հետ, որոնք իրենց հերթին կազմած
էին միմյանց հետ: Ըստ ժամադրմերիայի ունեցած տեղեկութիւնների,
այդ խմբակների անդամներից էին Խաչատրյանը, Հովհաննիսյանը, Զավար-
յանը, Շահազարովը, Գլուշակյանը:³

Քեպես այս խմբակների վրա դետես զգացվում էր նարողնիկութեան
ազդեցութիւնը, այնուհանդերձ ամբողջութեամբ վերցրած 19-րդ դարի
90-ական թվականների երկրորդ կեսում հայ ուսանողութեան մեծ ավարտ-
վել էր անցումը դեպի ազգային-ազատագրական շարժումը: Դրա մասին է
վկայում Պետերբուրգի ուսանողութեան նախաձեռնութեամբ 1889 թ. Մոսկ-
վայում հրավիրված հայ ուսանողութեան համագումարը: Համագումարի մաս-
նակիցները Քեպես չկարողացան ստեղծել մեկ միասնական կազմակերպու-
թիւն, բայց ձեռնարկեցին մի շարք կոնկրետ քայլեր հստակեցնելու ի-
րենց դիրքը ազգային խնդիրների նկատմամբ:⁴

Նարեք է այն փաստը, որ նարողնիկական շարժումը ուժեղ ազդեցու-
թիւն ունեցավ հայ քաղաքական կուսակցութիւնների ծագման ու ձևա-
վորման վրա: Այդ տեղի ունեցավ առաջին հերթին սոցիալ-դեմոկրատական
Հնչակյան կուսակցութեան նկատմամբ: Խոսելով հնչակյանների զաղափարա-

¹ РГИА, ф. 1410, оп. 2, д. 229, л. 13.

² ГАРФ, ф. 102, 3-дво, оп. 1888г., л. 297, л. 9.

³ Տես նույն տեղը՝ թ. 11:

⁴ Շաթիրյան Մ., ,Հայոց հասարակական շարժումների պատմութիւնը,,
/,,Հայրենիք,, 1923, նո. 5, էջ 27/:

կան պլատֆորմի մասին, հնչակ Ռոսան-Ազատը իր հուշերում խոստովանում
է, որ իրենք քուրորն էլ գտնվում են նարողնիկների ազդեցութեան
տակ:¹

Նույն ազդեցութիւնը տեղի ունեցավ Զ. Յ. Դաշնակցութեան ձևավոր-
ման վրա դաշնակցական կուսակցութեան առաջին հիմնական ընկեր-
սագող , ,Ներսիսապետ Հայաստան,, կազմակերպութիւնը, որը ստագավ նաև
, ,Յուզինիյե նոմերա խմբակ,, անունը, շատ հարգերում հարգատ մնաց
նարողնիկութեանը;² Այդ կազմակերպութեան աչքի ընկնող անդամներից
էին Քր. Միքայելյանը, Ս. Զավարյանը, Ավ. Սահակյանը, Ն. Մատինյանը,
Ա. Թադևոսյանը, Մ. Շաթիրյանը, որոնք, մինչ այդ ակտիվորեն մասնակցել
էին նարողնիկական տարբեր խմբակների և կազմակերպութիւնների գործու-
նեութեանը:

Գաղափարական և կազմակերպչական տեսակետից սակայն , ,Ներսիսապետ
Հայաստան,, միաձուլ չէր: Նրա անդամների զգալի մասը հայ ուսանող-
ների մոսկովյան համագումարի մասնակիցներից էին և ունեին տարբեր մո-
տեցում ազգային հարցի նկատմամբ: Կազմակերպութիւնը ուներ այսպէս
կոչված , ,շովինիստների,, որոնք կենտրոնացել էին , ,Սևերնայ նոմեր-
ոս,, պանդուկում, և արմատական հեղափոխական-քնկերաբանների, որոնց
հանքավայրն էր , ,Յուզինայ նոմերա,, հյուրանոցը, ուր և գտնվում էր
, ,Ներսիսապետ Հայաստան,, կենտրոնը:³

Հարկ է նկատել, որ ոռուսական հեղափոխական նարողնիկական շար-
ժումն իր զգալի ազդեցութիւնն ունեցավ հնչակյան և դաշնակցական կու-
սակցութիւնների վրա 1880-1890-ական թվականներին, այսինքն նրանց
ձևավորման ու գործունեութեան առաջին տարիներին: Հետագայում հետզհե-
տե թուլացավ և զրեթե աննշան դարձավ նշված ազդեցութիւնը:

Առնախոսութեան հիմնական դրութիւնները արտահայտված են հեղինակի
հրատարակած հետևյալ հոդվածներում և գեկուցումներում.

1. , ,Նոր նյութեր , ,Հայրենաստերների Միութեան մասին,, ՊԲԶ, 1990,
նո. 3:

2. , ,Հայ ազգային նարողնիկական խմբակները 19-րդ դարի 80-ական
թվականներին,, , ,Ներսիսապետ գիտաշխատողների 23-րդ նստաշրջանի գե-
կուցումների թեզիսներ,, Նրա նոյեմբերի 23-24, 1992:

1 խան-Ազատ Ռ., ,Հայ հեղափոխականի հուշերից,, /,,Հայրենիք,,
- 1927, նո. 8, էջ 70/:

2 Միքայելյան Ք., /տես նույն տեղը՝ էջ 57/:

3 , ,Զ. Յ. Դաշնակցութեան ծնունդը և հիմնադիրները,, տես , ,Զ. Յ. Դաշ-
նակցութեան վախճանագիր,, Բոստոն, 1950, էջ 79:

3. „Հայրենասիրների Միություն, Կազմակերպություն, , , , Լրա-
բեր հասարակական գիտություններ, , , , 1995 թ., նո. 2:

ԴԱՆԻԵԼԻ ՄԿՐՏԻՇ ԴԱՆԻԵԼՈՎԻՇ

АРМЯНСКИЕ НАЦИОНАЛЬНЫЕ НАРОДНИЧЕСКИЕ
КРУЖКИ И ОРГАНИЗАЦИИ В 80-х ГОДАХ XIX ВЕКА

Исследование проблемы "Армянские национальные народнические кружки и организации в 70-80-х годах XIX века" имеет важное исто-
риографическое и политическое значение. Оно выявляет контакты ре-
волюционного характера в истории армяно-русских отношений, а так-
же отражает проблемы формирования армянских политических партий
гичакян и дашнакцутюн. Изучение темы позволяет раскрыть такие воп-
росы, как участие армян в деятельности русских революционных на-
роднических организаций, появление армянских национальных кружков
и организаций в армянской действительности, история армяно-русских
связей, а также проанализировать влияние русской передовой мысли
на армянские демократические течения.

Диссертация имеет цель - анализ одной из мало изученных проб-
лем армянской историографии - процесса вовлечения армянской молоде-
жи в русское революционное народническое движение.

Представленная работа является научной монографией. Нами ис-
пользованы не только опубликованные источники, но и впервые вводят-
ся в научный оборот многочисленные архивные документы. Публикуют-
ся новые факты, которые выявляют некоторые новые аспекты данной
проблемы.

В первой главе представлено участие армян в русском револю-
ционном народническом движении 70-х - начала 80-х гг. XIX в. В этот

период армянские народники, принимая активное участие в разных ре-
волюционных народнических кружках и организациях, не уделяли долж-
ного внимания проблемам армянской действительности.

Во второй главе диссертации показано появление армянских на-
ционально-народнических кружков и организаций в 80-х гг. XIX в.
Этот процесс был обусловлен рядом важных объективных причин, в
числе которых прежде всего надо отметить Армянский вопрос, кото-
рый заставил армянских народников обратиться к армянской действи-
тельности. Народническая идеология у армян-народников приняла на-
циональную окраску.

В диссертации также показано влияние русского революционного
народничества на формирование армянских политических партий гича-
кян и дашнакцутюн.